

պետուած, ինքնատիպ ու քմայքոտ, որոնք սկզբնական  
զանգուածէն կը ձեւեն սս սիւնաւորումները, սրտառուչ  
փափկութեամբ, ինչպէս նաեւ փեռեկտումներ՝ մազերը  
փուշ-փուշ ընող: Ամէն հասակով: Մաթիկ գանոնք կը  
նմանցնէ շատ բաներու, - մակաղած հօտի, խառնիխուռն,  
ո՛րը ոտքի, որն ալ պառկած, շրջուած զանգակներու, ո-  
րոնք տառապին իրենց համրութենէն: Որսորդ, վարժա-  
պետ, հովիւ կը տպաւորուին սա պատկերաչարքէն: Գե-  
ղացին կը տրտմի, հաւանաբար հողի պակասէն անգամ  
մըն ալ այցուած, երբ կը մոլորի այդ ալիքներուն ներսը,  
փնտռելու կորսուած ոչխարը: Օտարականը, գլուխը ճօ-  
ճելով կը բարձրանայ իմաստութեան, երբեմն ապշեցու-  
ցիչ խորութեամբ: Այնքան իրաւ է, որ ամէն ապրող  
ինքնիրմով պայմանաւոր փորձառութիւն մըն է: Ամէն  
ապրող գիտէ այնքան, որքան թուղթերու կայսրութեան  
մը ինքնակայր, որ մոռցած (ապրիլը) ուրիշները վերլու-  
ծելու կը ձգտի:

Օրը կը դառնայ դէպի էտինք: Աչնան տապը կոտ-  
րած է քիչ մը թէեւ ժայռերուն երեսին գոլը, հեռու ու  
դպող, տակաւին կը նեղէ մեր գնացքը: Վարերէն մու-  
խեր: Դէմի կանանչ դարաստանին ոչխարները կուքֆի:  
Հոն են հիմա հարսները, իրենց դոյլերով, կենդանիներուն  
պտուկները հեշտագին շոյելով ու իրարու պատմելով  
խոր, հոտաւէտ, տրտում բաներ...: Բոժոժները կու լան:  
Ու հովը իր թեւերուն վրայ ճահիճէն զարկած է մժեղներու  
փափկիկ ու թրթռուն շղարչը: Հարիւրաւոր զգայնու-  
թիւններ, անկապ մտածումներ իրար կը հալածեն գան-  
կիս տակ: Սրճարանը իբրեւ պատկեր կը բռնանայ մըտ-  
քիս: Հարկահաւաքը՝ ուրիշ սարսափ: Գոհ եմ, որ վտանգը  
առայժմ չի սպառնար սա տղոց:

Մեր տրիբո՞ւնը:

Ով գիտէ ինչե՛ր ունի գանկի տակով: Շատ պտտողը  
շատ գիտէ, ըսած է ժողովուրդը:

Մինակ գիտո՞ւն: Ընկեր Մաթիկ Մելիքխանեանցը  
անշուշտ յեղափոխական մըն է ու իբր այդ գինուոր մը